

ազգեր արձանադրութեանց. բայց «*եօթնհորդ*» դարու Կիմմերեան մեծամեծ արշաւանք զիրենք ջախջախեցին՝ բառին յատուկ իմաստով, Մարք ընկնեցին զանոնք՝ զրիթէ առանց զիմադրութեան հանգիսեպետ, այժմու Հայք հայածեղին զանոնք Շրապսիայ դաշտավայրից մէջ. եւ այն պահուն՝ երբ Գարեհի նախարարութեանց բաժնեց պետութիւնը, Ուրար-դուի թագաւորութիւնն անհետացեր էր ամբողջովին»։ Շատ լաւ. բայց թագաւորութիւն մի, ժողովուրդ մի «*հայածեղու, բնաշինէ ընեւու*» համար, հարկ է զօրութիւն մ'ունենալ. ապա ուրեմն «*եօթներորդ դարուն*» Հայք ունէին իրենց անկախութիւնը, բուսական ուժ մի «*հայածեղու, վանելու*» համար զՈւրար-դացիս։ Բուսական էր այս ցուցնելու համար, թէ Հայք Տիգրանէն յառաջ «*աշխարհակալ պետութիւն*» մ'ունէին։ Եթէ Տիգրան Ա «*Արքայ արքայից*» կոչուած է, այս ոչ միայն երկրին միւս թագաւորներէն զանազանուելու համար էր, այլ վասն զի տիրեր էր Ասորոց, Պաղեստինու եւ Միջագետաց. եւ Մարք, Ասորպատական եւ Կարգուք իրեն հպատակէ կէն. նա զողացուց բոլոր Ասիան, ինչպէս ըրեր էր երբեմն մեծն Աղեքսանդր։

Իսկ յետ Տիգրանայ։

Նոյնպէս յետ Տիգրանայ կը գտնենք մենք խոմբ մի անկախ թագաւորաց, յորոց ոմանք զրաճեալու վերայ կոչուած են «*Արքայ արքայից*»։ Առաւելագ Ս եւ Տիգրան Գ¹։ Սառանեանց եւ Ստորին-Կայսերութեան ժամանակ՝ անկախ էր Հայաստան. այս երկու տէրութիւնք կը խնդրէին Տրդատայ (286—341), Խոսրով Բ¹, Տիգրան Բ¹ եւ Արշակ Բ¹ (363—384) նիգականցութիւնը։

Բազդրատունեաց ժամանակ՝ Աշտ Գ (952—977), — ինչպէս Շահնշահ կոչուած Աշոտ Բ (914—928), — բոլորովին անկախ թագաւոր էր, այս պատճառաւ եւս կրցաւ իրեն եղբարքմէ միոյն Կարսի թագաւորութիւնը շնորհել։

Նոյնպէս 908 թուականին՝ վանայ նա. հանգին մէջ կ'իշխէր Աբորունեաց անկախ թագաւորութիւնն։

Հուսկ ապա ինչ պիտի ըսուի Ռուբինեանց հարստութեան մասին, որոց դրամք կը գտնուին Աղջային մատենադարանին մէջ, զորս գասակարգեր է զաղդիսացի գիտնականն եւ արեւելագէտ Վիկտոր Լանգլուս¹։

Իրաւ է թէ Հայք շատ անգամ իրենց դրացի ազգերէն նուաճուեր են, բայց պատմականօրէն անմիտելի է՝ թէ Յունաստանի եւ Բուլղարիոյ նման՝ իրենք այլ ունեցեր են իրենց անկախութիւնը։

Հաճեցէք ընդունել, Տէր, եւ այլն. եւ այլն։

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԱՆ

1. Հմտ. Նոյնպէս Վ. Լանգլուս, *Numismatique de l'Arménie au moyen âge*. Paris, 1853։



Գ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ա Մ Ի Ս

Ա Պ Ի Լ

— 32 —

ՄԻԱՅԵԱԼ ԵԱՀԱԼԳԻ ԵՒ ՍՊԱՆԻԱ

Ազգերի մասոյն առաջին օրէն հեռաւորէրք ծանուցին որ Հռոմայ Պապը՝ Լեւոն ԺԳ, իր Խաչաղարար ընդդէմ պատերազմի մը վտանգի. կը մէջամտէր օգանիտ—ամերկեալ խնդրոյն մէջ։ Ընդերկար խաչաղակութեանց եւ վիճից ներքեւ որ, արեւօք քահանայապետը ինքեւաբարաւոր առած էր այդ քայլը, թէ առ նա զիմեր էին Սպանիոյ թագապահ թագուհին եւ կամ Մեկ-Քիշիւն Նախագահը։ Եւ սակայն Սրբազան Պապին միջամտութիւնը չէր իբրեւ իրաւարարութիւն մը, այլ ջանք մը եւ զիմուք, մի եւ նոյն ժամանակին առ երկուս վարչութիւնս. յետին հնարքը զանելու պատերազմի մը առաջըր առնելու համար. եւ զայս էր կատարէր թէ Սպանիա եւ թէ յԱմերիկա իւր նուիրակաց ձեռքով։

Ժժ դարուս վերջը մեծ է եւ ամենամեծ պապական եւ մանաւանդ Լեւոն ԺԳի անձնական բարձր ազդեցութիւնը։ Նոյն իսկ ոչ կ'աթլիկ

1. Հմտ. E. Babelon, անդ։

Պետութիւնը կը նկատեն ի նմա իմաստուն և քաղաքագէտ բարձր միտք մի. և յայտնի էր որ թէ թաղապահ թաղուհին և թէ Մըկ-Քինլէյ պարտուպառաւ խորին յարգանքով ընդունեցան պապական առաջարկը, և Սպանիա տիրով յանձն առաւ Լեւոն Թօրի միջամտութեան առաջին պայման՝ զինադադարու մը ընել ի Կուբա, զոր շատոնց խորհուրդ կու տային նաեւ Եւրոպայի Պետութիւններէն ոմանք, և որով հաշտութեամբ միջամտութեան արդէն դիմած էր թաղապահ թաղուհին: Սպանիոյ կառավարութիւնը ի սկզբան երկու պայման զբաժ էր զինադադար տալու համար, նաեւ որ Ամէրիկեան զոհաւորք հեռանան Կուբայի շրջէն, և երկրորդ՝ որ ապստամբը խնդրեն զլինադադար, ապա լեւոն Թօրի ազդեցութիւնը հարկեց այս մասին Սպանիոյ դժուարութիւնքը:

Իւ սակայն զինադադարման լուրը առաւել կարծես խորխուսեց Ուշինդիթնի ծերակոյտը ի պատերազմ. Անհաւերը կը պահանջէր որ նախագահը հրատարակէ իւր Աւետաղիւր, որով պատերազմ ծանուցանէ. Մըկ-Քինլէյ ավարտաւորութեան էր երկուստ շանդաղ և յոյ՛: Մըկ-Քինլէյ Սրբազան Պապին միջամտութեան վերայ, առ ժամա խաղաղութեան յոյս մը ունեցեր էր, և ժամանակ շահելու նպատակաւ՝ հիւանդութիւնն պատճառելով, յետաձգէր Եւ Լեւոնադիրը. ոպանելով նաեւ զինադադարման արդեանց: Բայց երբ Կուբայի ապստամբը մերժեցին զինադադարումը և պահանջեցին միայն որ Սպանացիք ելլեն Կուբայէն, այն ատեն Լեւոն Թօրի միջամտութիւնը աւելորդ կ'ըլլար և Մըկ-Քինլէյ Ապրիլ 11ին զրկեց իւր Աւետաղիւրը առ Համաժողովը, յորում թէպէտ հակառակ ըզից ծերակուսին, կը մերժէր ապստամբաց պատերազմողի իրաւունքները, ապա կայն կ'ընդունէր Միացեալ Նահանգաց զինուոր միջամտութիւն մը իւր չէզոք պետութիւն: զԿուբա խաղաղելու համար, ապով անոր հաստատ և զօրաւոր կառավարութիւն մը: Կը խընդրէ Համաժողովէն մեծ վարկ մը Կուբայի քաղցելոց օգնելու համար. կը յաւելուր օր Մէյնի պէտքը, ամենուն ցուցուց որ Սպանիա անկարող է թէ Միացեալ Նահանգաց և թէ ուրիշ Պետութեանց նաւերու ապահովութիւն տալ Կուբայի շրջուն մէջ. և կը վերջացնէր որ հարկեր վճարեն ապա որ և ինչ եղանակաւ Կուբայի պատերազմին: Մըկ-Քինլէյ, իւր Յաւելուած մը Աւետաղիւրն, կ'իմացնէր զինադադարման լուրը և Համաժողովոյն կը յանձնարարէր « զնահատել Սպանիոյ այս զեջումը »:

Աւետաղիւրը մեծ ծափահարութեամբ ընդունեցան հասարակապետականք և ազդուացան ռամկապետականք, և ծերակոյտը և խօսարունը զրկեցին զայն Արտաքին գործաց Յանձնար, ժողովոյն: Մերակոյտը պահանջեց « Կուբայի անկախ Հասարակապետութիւն », զոր չընդունեցան Խօսարարը: Այս տարաձայնութենէն կը համարուէր որ ընդհարումն ծնանի երկուց ժողովոց մէջ: Սակայն ըստ ամերիկեան սահմանադրութեան, երկու կողմանէ նշմարաբ ընտրուեցան, որոնք միաբանեցան ընդունելուն ծերակուսին լուսնաձեւը, ի բաց Թոյլով միայն « Կուբայի անկախ Հասարակապետութեան » մը անմիջապէս հանաչումը, և վարչական ձեւի մը ընտրութիւնը Թոյլով Կուբայի ժողովրդոց՝ յետ իրենց ազատութեան: Այս որոշողութիւնը ստորագրուեցան նախ երկուց Խօսարարնաց նախագահներէն, ապա Մըկ-Քինլէյ ստորագրեց Ապրիլ 20ին և ձեռագրով ծանուց իւր զեպանին ի Մարտի, որպէս զի վերջնագրով մը հաշտեց Սպանիոյ վարչութեան, և պատահաւոր պահանջէ, երեք օրուան պայմանաւորում տալով:

Արդէն ի Սպանիա մեծ էր աւազանւոյն և ժողովրդեան յուզումը զինադադարման մերժութեան վրայ: Նառաչակից ցուցեր եղած էին Արտաքին Գործոց պաշտօնարարին առջև և ուրիշ կողմը, զորս Ոստիկանութիւնը ցրուէր էր: Բովանգակ Սպանիա ոտք ելած կը տեսնուէր իւր պատիւը պահպանելու համար « Ընդդէմ գոռոզ պահանջմանց ետնքներուն »: Դադարէն էին կուսակցական վերադառնութիւնք: Պաշտօնարարներն նախագահը Սաքսագա՛ Ապրիլ 19ի զօւժարման մը մէջ գոչեր էր որ « Ա՛լ գործք կարեւոր են և ոչ թէ Խօսք »: Վարչութիւնը ամէն պատուաւոր միջոց շանացեր էր ի գործ ընելու, պատերազմի առիթ չտալու համար, և Սըր. Պապին և Պետութեանց յորդորներուն վրայ՝ յետին զընդունութիւնք ըրեր էր: Հիմա որ Միացեալ Նահանգք ոտնակոխ ընելով մեր պատիւը, կը ոպանան մեր երկրին ամբողջութեան, կարեւոր է Սպանեցուց միութիւնը: Սպանիա չկրնար թողալ՝ օր իր երկրէն մոսնիկ մը վերջուր »:

Թաղապահ թաղուհին արտասովոր շքեղութեամբ բացաւ Նոր կորդէները, և Պապին հանդէս մէջ, յետ Համաժողով մը դիմելու Կուբայի խնդրոյն պատմութիւնը, աւելցուցեր էր որ, « Եթէ Միացեալ Նահանգաց վարչութիւնը մղուի ժողովրդական հոռութէն, կացութիւնը անտանելի կ'ըլլայ Սպանիոյ պատուոյն և կը

ստիպուհինք իզելլ ամենայն քաղաքական յարա-
բերութիւն Միացեալ Նահանգաց հետ »։ Ետ
յիշելու Լեւոն ԺԳի միջամտութիւնը, կը վեր-
ացնէր խօսքը որ « Ապագայ ղեկավարութիւնք
պիտի չսպասուի երկրին մօր եռանդը »։ Փառա-
ւոր ծովային զօրութեամբ և բանակով, ազգին
միութեամբ և Աստուծոյ օրհնութեամբ պիտի
կտրենք անցնինք պատուով, ինչպէս մեր Նախ-
նիքը, ներկայ անպատեհութիւն և ենթառ տաքնա-
պը »։ Աննկարագրելի ծափահարութիւնք եղան
թագապագ թագուհւոյն, որուն ժողովրդակա-
նութիւնը իւր զերազոյն կէտին հասաւ այս
օրերուն մէջ։

Երբ Ապանիոյ ղեկաւորն ի Ուշիշիթոն՝ իմա-
ցաւ խօսարարն նախագահաց և Մըկ-Քինլէյի
ստորագրութիւնը, անմիջապէս խնդրեց ան-
ցադիրքը առանց վերընգրոյն սպասելու։ Իսկ
ի Մադրիդ ի դժուր, վերընգրոյն չներկայացու-
ցած, Ապանիոյ վարչութիւնը անցադիրքը յղեց
առ ղեկաւորն Միացեալ Նահանգաց։ Այն օ-
րունքն պատերազմը հրատարակուած կրնար
համարուիլ թէպէտ ոչ պաշտօնապէս։ Ամէն
կողմէն հեւպատուք քաշուեցան։ Ապանիոյ
հպատակաց հոգերը պիտի հոգային Գալլիա և
Աւստրիա, Միացեալ-Նահանգաց մասին պիտի
հակեր Անգլիա, որուն համակրութիւնքը առ
Միացեալ Նահանգ՝ այս վերջին պարզանե-
րու մէջ մեծապէս դիտուեցաւ, Եւրոպիոյ միւս
Պետութիւնք չէզոք դուրսիւն մը բռնեցին,
յորդորելով զԱպանիա և զՄիացեալ Նահանգս
որ ստորագրեն 1856ի Պարիզու քաշանց, որով
և Ֆրանս ըրլան վաճառական օտար զրօշակ
կրող նաւերու։

Կուբայի ինքնավարական վարչութիւնը եւս
ամէն ջանք բրաւ հրատարակութեամբք և բա-
նակցութեամբ շահելու. զպատեհաւոր որ հա-
մաձայնին իրենց, յորում էր Կուբայի անկա-
խութիւնը և երջակութիւնը, բայց և զուր։
Ապատեմութեան զործառնատարութիւն ի Նիւ-
-Երթ՝ ծանոյց որ Կուբայցիք կը մերժեն՝ օր
և է միջամտութիւն մը Միացեալ Նահանգաց,
որուն նպատակը ըրլայ Կուբայի անկախ հա-
տարակապեմութիւն մը։

Ապրիլ 22ին գեռ վերջնադրոյն պայմանաւ
ժամանակը չբացարձ, ամերիկեան նաւատորմը
մը Բէյ-Ուէստէ մեկնելով, կալնաւարեց Բոռո-
նայիննորառն սպանիացի վաճառական նաւ մը։
Եւ այդ նաւերու որորդութիւնը բարունակեց
անկէ վերջը երկուսուսէ բայց ունիլ Ամերի-
կացաց կողմանէ, մինչև տար Պետութիւնք
եւս բողոքելով, Մըկ-Քինլէյ խնդրեց Համաժող

ովէն որ՝ պատերազմի սկսուիլը պաշտօնապէս
ծանուցուի. և Համաժողովը զայն սկսած հռչա-
կեց Ապրիլ 24ին, նաւերու կալնաւարելէ օր
մը առաջ. մինչդեռ ըստ վերջնադրոյն, պէտք
էր սկսել 24ին առաւօտը։

Իսկ Մարտիի պաշտօնական լրագիրը Ապրիլ
24ին հրատարակեց պատերազմը ընդ Միացեալ
Նահանգս և ընդ Մաանիա, ծանուցանելով միան-
գամայն որ կ'ընդունէր 1856ի Պարիզու դեռ-
պանաժողովին վճիռը, որով չէզոք զրօշակ
մը կը փրկէ վաճառք մը. միայն թէ պատե-
րազմական ապրանք ըրլայ։

Ամերիկայի և Եւրոպիոյ պետութիւնք մի առ
մի հրատարակեցին իրենց չէզոքութիւնը։

Ի Ապանիա պատերազմին հրատարակուելով
ամէն կուսակցութիւնք յորս հատարակապե-
տականք և Կարլոսեանք, հայրենասիրական
որով խոստացան օգնել՝ պաշտօնաւորանին հայ-
րենեաց պաշտպանութեան զործոյն մէջ, և վըռ-
տահուութեան քուէ տուին Պաշտօնաւորանին։

Ամերիկայի ծերակուտին և ժողովրդեան վեր-
ջին ժամանակի ցոյցտուած պատերազմը մուշեղի
եռանդը և լրագրական յօդուածք, այնպէս կար-
ծել կուտան որ փութով մեծամեծ պատերազ-
մական հարուածներու հանդիսատես պիտի ըլ-
լայ ըտրը աշխարհ, և թէպէտ պատերազմին
հրատարակական ցոյցս որ միայն վաճառակա-
նական նաւերու կալնաւարման ղեկաւոր կան
և Կուբայի նաւական պաշարում, որով կը կար-
ծուի թէ պատերազմը պիտի երկարի, — սակայն
այդ կարծեմած անգործութիւնը, ժամանակ չա-
հելու համար է անշուշտ։ Ասկէ մեծ քաջո-
հութիւն ժողովրդեան մէջ որ այս պատեմառա-
ւանցաւոր կը դատի զՊաշտօնաւորանը և զծովա-
կալն Սէմուէլ։ Ամերիկա կը համարէր որ քիչ
օրուան մէջ պէտք էր տրուէր ըրլայ Կուբային։
Պաշտօնաւորանը յոտին մնալու համար, հարկ է
որ մեծ հարուած մը դուրսէ։

Ապրիլ 28ին Նիւ-Եորքէն հեռագրեք հռչակե-
ցին որ նաւատորմը զնորակակոծեր և է հիմանք
քակեր եր Մադէնցաքի ափքցը, որ 80000
բնակչօք նաւահանդիստ մ'է Հաւանայի մաս։
Ասկայն ապանիացիք անշշան զործ մը ցուցուցին
այդ զնորակակոծումը, յորում ըստ Բլանկոյ
մարտնախախտն՝ ամերիկացի զորահաւոր մը մե-
ծապէս վնասուեր էր, և ոչ ոք մեաւեր էր Ապա-
նիացեալ կողմէն «բայց թէ ջրի մը»։ Շերման՝
Միացեալ Նահանգաց հինաւարց և նշանաւոր
Ատտաքին Գործք պաշտօնեայն հրաժարեցան
և իրեն փոխանակեց Դեյ։ Շերման ըստ է՝ որ
« Կուբայցիք որ մը մեզ նոյնը պիտի ընեն, ինչ

որ ըրին Սպանիացւոց և: Դեռ անորոշ է որ արքեպօ Միացեալ Նահանգք առանց շահախնդրութեան դիմած են ի պատերազմ, պարզապէս ազատ ընելու համար զվուսթա, թէ ունին շահու նպատակ մը:

ԱՐԵՒԵԼԻՍ ԵԱՅՐԸ - Ի ԶԻՆԱՍՏԱՆ

Յեա աստանալու Ռուսաստանի զՊորտ Արթըր և Ցա-Լիէն-Վան, հարկ էր որ Անգլիա կամ պատերազմ յարուցանէր և կամ հաւասար շնորհ մը ստանար: Յետինս տեղի ունեցաւ և Զինատան նոյն պայմաններով շնորհց զՎիյ-Նէյ-Վիյ, զոր ներկայապէս բռնած էր Ճապոնի փոխարէն չին-ճապոն պատերազմի տուգանքին: Եւ թէպէտ Անգլիոյ լրագիրք կը պարտաւեն զվարչութիւնը և անհամամաս մեծագին կը համարին Ռուսաստանի աստացած բաժինը, սակայն կազմաւորութիւնն ալ կը պնդէ որ Վիյ-Նէյ-Վիյ ներկայապէս շատ աւելի կարեւոր դերք մը ունի քան զՊորտ Արթըր: Գարձեալ Անգլիա առջի օրութեան հոգակեց որ ինքը ի Զինատան դործել կ'ուզէ վաճառականական և ոչ աշխարհականութեան տեսակէտով: Շատ է իրեն համար այնպիսի կարեւոր կէտ մը բռնել, որով կարենայ միշտ զօրաւոր ազդեցութիւն մը ունենալ Պեկինի վարչութեան վրայ: Անգլիոյ զահաւարէն վերը, Արեւելից ծայրը չինական ինչորէր իւր սպառնական և շառաւղից կերպարանքը կործնեցուց: Պետրուրդի լրագիրք մեծ պանծանք հուպկեցին առաւ զետպանին չքեղ ընդունելութիւնը ի կայսրէն Զինատանի, առ որ յայտնեց Զարին գահութիւնը Պորտ Արթըրի և Ցա-Լիէն-Վանի նկատմամբ: Կայսրը պատասխանեց որ՝ ինքզինքը մեծապէս երջանիկ կը համարէր Զարին բարեկամական հեռազրի վրայ և « երկդարեան բարեկամութիւնը առ դաշմաբ ասելի հաստատութիւն պիտի տեսար »:

Զինական վարչութիւնը կանխաւ Շանսի գաւառին հանքերու և անխոյ մենաշնորհութիւնը ստուած էր անգլիա-խոտալական ընկերութեան մը: Եւյժմ տուաւ Նաեա Նոյն դաւառացի երկաթուղեաց և իրանցից առանձնաշնորհութիւնը: Այսպէս Զինատանի ամենէն բերրի և կարեւոր գաւառներէն մին կ'անցնի իտալիոյ և Անգլիոյ մեծքը:

Զինատան որ հազարաւոր դարերով մեծ նախաձեռնով մը շուկեց իւր զանբը բանալ օտարաց վաճառականութեան համար, այժմ աս-

կաւ առ ասկա իւր տունը կը յանձնէ նոցա ձեռքը:

ԱՆԳԼԻԱ

Թէ վիկտորիա Թագուհին և թէ Լորդ Սըլլըրի կը գտնուէին ի հարաւային Գալլիս: Անգլիա զբաղեալ է համաշխարհական խնդրով:

ԱՆԳԼԻԱ - ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Տերվիշը Մարտ ամսոյ մէջ ուժերին ամփոփելով, սպառնական դերք մը առեր էին և անպակաս էին անգլիա-եգիպտական ձառնոր գունդերու հետ ընդհարմունք: Այսպիսի անորոշ և անվերջ կռիւներ բնաւ օգուտ մը չունէին անգլիա-եգիպտական բանակին, մասնաւոր որ կլիման դրեմք կը սկսէր նեղել:

Մարտ 26ին եգիպտական գունդերը թնշանօթակիր նաւերով բաղխեցին Ղէէնտի և կործանեցին բերդերը, Խերցեյն շատ մը տաւարներու, ցորենի և ուրիշ պաշարուց, ազատելով 600ի չափ սարուկք: Տերվիշներէ մեծեր էին 160 անձինք: Շէնտիի առմանէն վերջը անգլիա-եգիպտական բանակը զօրաւոր դերք մը կ'ուսնենար, և Ապրիլ 8ին ինչիւր սպառնալուք, յարձակողական դերք մը առաւ և Ապրիլ 8ին անգլիա-եգիպտական բանակը կազմեալ 13000 անձանցմէ, զանուեցաւ յԱռաբար Տերվիշներու ճամբարին առջեւ, որոց կը հրամայէր Էմիրն Մահմուտ՝ ազգակից Ապսուլլահ Խալիֆային, և սկսաւ ռմբակոծել 36 հրանօթիւք, աւելելով և ոչնչացնելով թշնամուոյն հողաբլուրքը և պատնէշը: Տերվիշը անկողի ըլլալով հրանօթիւք մըցել ահաւոր մուլգնութեամբ յարձակեցան թշնամուոյն վրայ հրացանով և օրով: Արեւնակից խառնուրդ մը եղաւ մարմին առ մարմին: Բայց Էմիրն Մահմուտ դերի բըռնուելով, և Տերվիշը սեանելով որ ի դուր էր ընդդիմութիւնը, սկսան փախչիլ, թողլով դաշտին վրայ 4000 զօրի և 3000 մեղակալ: Եւ 12 էմիրք: Անգլիա-եգիպտական կողմանէ մեծան երկու սպայք և ասոն զինուոր անգլիացիք, 81 զինուորք եգիպտացիք: Իսկ վերաւորք 430, յորոց 350ը եգիպտացիք:

Առաբարայի յաղթութիւնը Անգլիա-եգիպտական բանակին առջեւ կը բանար Խարթումի ճամբան: Բայց յԱնգլիա եւս կ'ունենար մեծ ազդեցութիւն մը ի նպաստ Պաշտօնարարին: Քիչներ առանց շառաչի, նշանաւոր յաղթութիւն

մը տարեր էր և Վիկտորիա թագուհին հեռագրով մը առ սպարապետն կը յայտներ իւր մեծ գոհութիւնը:

Քիչ օր վերջը Կիշնէր յաղթանակաւ մտաւ ի Բերբէր, ուր մեծ ընդունելութիւն հտաւ ժողովրդէն, որ ներգաւթ էր Ցերովիշներու հարստա-հարութիւնէն: Անգլիա-եղբայրական բանակը յետ քանդելու Ցերովիշներուն ճամբարը նաեւ ի նախկյաւ, դարձան իւր ճամբարը յԱտարաւ: Իսկ Կիշնէր զօրավարը ահապարեց ի Գահիբէ, հետը ունենալով նաեւ զՄահմուտ Էմիրը: Եւ որուն տրուեցաւ պատշաճ զրուծիւն մը:

Ա Խ Ս Տ Ր Ի Ա

Ապրիլ 1ին հրատարակուեցաւ Փրանկիսկոս Յովսէփ կայսեր մէջ նամակն առ արշիդուքոս Փրանկիսկոս Ֆերսինսնաւ, որով կը կոչէր ղեկաւորն ի գործունեայ զինուորական ծառայութիւն: Իրազիբք այս հրահելին մէջ կը նկատուէր թաղաքապետական իրաւանց գործարդութիւնը:

Աւտարիա-Հունգարիա եւս պիտի զօրացնէ իւր նաւատորմիդը, առ այն յատկացնելով 55 միլիոն ֆիորին. և այս նպատակաւ թերեւս մասնաւորապէս կայսրը նախադասեց Ապրիլ 5ի պաշտօնարանական գումարման ի Հոֆբուրգ:

Բոհեմիա առ ժամս հռոյզարտութեան մէջ կ'երեւայ:

Ի Բուզարէշտ Ապրիլ 1ին տօնուեցաւ 1848ի սահմանադրական օրինաց հրատարակուելուն յիշներեակը: Աւազանին և երեսփոխանք Պաւլաթը երթալով հաւատարմութեան ուղերձ մը ներկայացուցին առ Թագաւորն: Կապտատեալանց « օր վստահ էր Մահաթաց հայրենասիրութեան և անոնց օրհնադրաց խոհեմութեան և իմաստութեան վրայ »: Երեկոյեան չեղել լուսաւորութիւնք եղան և ժողովուրդը թաղմաց մեծ եռանդով բռնադատեց զԹագաւոր կայսրը երեւնալու Պալատան պառլամենտէ:

Ի Ֆիւռմէ այս երրորդ անգամ քաղաքագլուխ ընտրուեցաւ Գոնկս, Մալանդէր: Կապովարի-շը հարցուց իրեն որ կը հաւանէր երդնուլ Պեռութեան սահմանեալ կարգաց վրայ: Երբ նա ժխտեց, զընտրութիւնը նորէն ոչնչացուց:

Ապրիլ 27ի խորհրդարանի գումարման մէջ Նոյեմբերի ազգի անտարանները նորոգուեցան, Բաղենի Պաշտօնարանը ամբաստանութեան ներքեւ ձգելու վիճարանութեանց առթիւ: Գոկա. Պրատարքց ուղելով պաշտպանել խորհրդարանին նախկին ղեւանը, ծանր նախապիւններ

ընդունեցաւ զերմանացի խմբէն: Խորհրդարանը զրեւութէ շուարեալ վիճակի մէջ սահմանեց 175 քուէիւք ընդդէմ 187 քուէեցի: Բաղենի Պաշտօնարանի ամբաստանութիւնը նկատողութեան առնուլ և յղել զայն Յանձնաժողով մը: Գերմանացի տարրը յաղթութիւն մը տարած համարուեցաւ, նոյն իսկ եթէ իրական արդիւնք մ'ալ չէնտեսէ:

Ապրիլ 27ին Կոմսն Թունն՝ նախագահ պաշտօնարանին, խորհրդարանի մէջ կարգաց վարչութեան կարեւոր յայտարարութիւն մը՝ նկատմամբ լեզուաց: Կը փափագէր որ մշտակայ Յանձնաժողով մը հաստատուի լեզուական խնդիրները լուծելու համար, և վարչութիւնը ամենայն եռանդեամբ պիտի լծանայ իրապցնելու Յանձնաժողովոյն աշխատութիւնը և սահմանեալք: Նկատողութեան առնելով նաեւ փոքրամասնութեան շահերը: Խորհրդարանը յետ մտիկ ընելու լուծութեան, նորտը փակեց, որպէս զի ժամանակ ունենայ խորհելու Պաշտօնարանի առաջարկը: Յաջորդ նիստերուն մէջ Յանձնաժողով մը առաջարկը սկսաւ մեծաւ մասնութիւն մը շահել:

Բ Ե Լ Ճ Ի Ա

յԱնվերտա Ապրիլ 13ին գումարուեցաւ վաճառականական ուսմանց յառաջադիմութեան համար Համալգային ժողովք մը որուն կը նախագահէր Լուի Սըրաւս: Գալլիա, Անգլիա, Միացեալ Նահանգք, Իտալիա, Հունգարիա, Լիւստամբուր, Նորվեգիա, Սերբիա, Շուէտ և Զուիցերի զրկած էին իրենց ներկայացուցիչք: Բաղում հմուտ քառասունութիւնք եղան վաճառականական ուսմանց յառաջադիմութեան համար. և սահմանուեցաւ որ 1899ին նոյն ժողովքը գումարուի ի Վինետիկ:

Բ Ո Ւ Լ Ղ Ա Ր Ի Ա

Նկատմամբ այն զինուորական սպայոց՝ որոնք մասնակցած էին Ալեքսանդր Բատտեմբերգի դէմ դաւոյն և յետոյ արպաւինած էին ի Ռուսաստան, և որոց դարձը իրենց զինուորական աստիճաններով, տարիններ ի վեր խնդրէ ի Ռուսիոյ կողմէն, և վերջապէս համարուէր ցարմարութեան մը հասած, Սոֆեյայէ Ապրիլ 3ի հեռագիր մը կը ժամուցանէ որ « Հազարապետն Ռիմոսֆ բուլղար պատեւրազի պաշտօնեայն, հազարապետն Պեւքով Կ. Պոլսոյ առաջնապետան զինուորական

կցորդ և հրամանատարն Արսէն՝ մին ի ղլխաւ
ւոր ապաւինելոց ի Ռուսիայ, քանի մը շաբաթ
առաջ յարմարութեան մը եկած էին, որ զս-
բազար Պուրոզատքնէ, առաջ պատերազմի
պաշտօնէն հաւանութեան պիտի ենթարկուէր։
Սահման Պեշեղով և Արսէնի տակաւին չկրցան
համահայնել առաջ տպապահուելի զլուծի զօրա-
վար Սահարոֆի հետ »։ որով խնդիրը առ ժամ
կը մնայ առ կտու։

Գ Ա Լ Լ Ի Ա

Պատերազմական ժողովքը որ դատեր էր ղլխ-
տերհաղի, գումարեցաւ Ապրիլ 3ին, և որոշեց
կրկին կուել ի դատ զՋուլա, իւր նամակին հա-
մար առ Լադերն Օրոր։ Փափազ եւս յայտնեց
որ Ջուլայի անունը ընկուի Լեփոմի տ'Օնեօրի
կարգէն։ Դատը պիտի ըլլայ ի Վերսալ Ապրիլ
23ին. և արգէն Ջուլա նշանակած է նախկին բ-
վանդակ վկայքը, որոց վրայ կ'ուզէ յաւելուլ
քնոյն ինքն Դրէյֆուս, որ ըստ Օրորի, « միայն
ստուգապէս կարող է ցուցնել Եստերհաղիի
յանցաւորութիւնը »։ Եւ առ այս պիտի պա-
հանջուի անոր փոխադրութիւնը ի Գալլիա։

Ըստ նոր հրատարակութեանց, ոմանք կը հա-
մարին որ գերման հազարապետն Եվարցեպ-
ֆէն, նախկին զինուորական կցորդ ի Պարիս, և
իտալիոյ զինուորական կցորդ Պանիցցարդի,
սեղեակ ըլլան Դրէյֆուսի մասնութեանց. և
այսպէս կը մեկնուի զոցս հետապնդու ի Պա-
րիսէ։

Ծերակոյտը Ապրիլ 3ին հաստատեց Նլեմուս-
քը, զոր վերջնականապէս քուէարկեց յօտարա-
նը Ապրիլ 7ին։ Ապա սահմանեց գումարուելու
Յուլիս ինչ յետ նոր ընտրութեանց։ Այսպէս
բացուած կը համարուի ընտրութեանց եղա-
նակը։

Նախագահն Ֆելիքս Թո՛ր՝ մեկնեցաւ ի Նից-
ցա, իրելու հանդիստ առնուլ յաշխատութեանց,
բայց առել ի խնամական այցելութեանց հա-
մար՝ հոն գտնուող Թաքաւորազանց։

ՅԱլանդի ռեզլարտ արձկուեցաւ Մաքս Ռե-
փո կրպակաց աւարտութեան յանցանքէն,
Կովայն վաղաժամորեալ կը մնայ պատասխան
տուլու համար՝ ի Պարիս հակահրէշական զրգովի
խանախօսութեան մը համար։

Գ Ե Բ Մ Ա Ն Ի Ա

Գուլիէլմոս Բ զծովակալն Տերպլեյն, քարտու-
ղար գերմանական ծովային զօրութեան, առ
նաւանեց պաշտօնեայ Պետութեան Բրուսելոյ՝ ք

վարձ նաւային զօրութեան օրինաց ընդունուե-
լուն։

Ապրիլի սկիզբը Բրուսելոյ երեսփոխանաց խոր-
հրդարանը խտրել արգիւնց « մի և է տեսա-
րան՝ զրգող ի պայականութիւն »։ և մեծա-
մասնութեամբ քուէարկեց՝ հրաւերել Բրուսելոյ
Ներքին Գործք պաշտօնեայն՝ արտաքսի ի
Բրուսելոյ զօրերդն ամերիկացի Բարրիսոն՝ ա-
րուն ներկայացմունքը հակառակ էին Հասա-
բակաց բարոյականին։ Անմիջապէս Բեռլինոր
Ոստիկանութիւնը արգիւնց ներկայացումները
որ այդ գերատեսչին պիտի տար ի մայրաքա-
ղաքին։ Բարրիսոն լրագրաց մէջ բողոքեց ընդ-
դէմ Բրուսելոյ օրենսդրի ժողովոյն, յանձնելով
իւր շահոց պաշտպանութիւնը Միացեալ Նա-
հանաց ղեկավարին։

Կայսրն Գուլիէլմոս Բ և կայսրն Փրանկ. Յով-
սեփ՝ Դրեղա գտնուեցան Սաքսոնիոյ Թաքաւո-
րին յիսնեքսովը շքեղութեամբ տօնելու, հոն
էր նաեւ ձինովայն զուգը իտալիոյ Թաքաւո-
րին կողմանէ։

Ք Ո Ւ Բ Ք Ի Ա

Բ. Դուռը Ապրիլ 3ին նոր շրջաբերական մը
չլեց առ մեծ Պետութիւնն, փութով լուծուեց
տալու կրտսեկան խնդրոյն, յարգելով միաւ-
րամայն կայսրութեան ամբողջութիւնը և մահ-
մետական շահերը։ Կը վերջացնէր յայտարարե-
լով որ Յուլիանը չկրնար ընդունել օտար հպա-
տակ մը։

Սուլթանն անձնական քարտուղար Թէլֆօլք
Պէյ ղրկուեցաւ ի Պետերբուրգ ընծաներով։

Բ. Դուռը փափագեցաւ Հոմարայ Մաքսան
Պապի քով դեպքան մը ունենալ, բայց քահա-
նայապետը չմերժելով իսկ այդպիսի առաջարկ
մը, ներկայիս անպատեհ ծանոց։ Գալլիայ որ
ի վաղուց իրաւունք մը ստացած է Ալբուկու-
կաթովի ժողովրդոց վրայ, չէր կարող հոն
աչքով տեսնել այսպիսի հաստատութիւն մը,
մանաւանդ ներշնչեալ ի Դերմանիոյ։

Ապրիլ 3ին Գալլիոյ ղեկավարն ի Կ. Պօլիո ժո-
նալագիւր մը ուղղեց առ Բ. Դուռը, պահան-
ջելով 800,000 Ֆրանք ի փոխարէն Անտաղոսն
կրօնական հաստատութեանց կրօն փնտնելուն
1895, 96ի պատահարաց ժամանակ։ Մանու-
ցանելով եւս որ կը վերապահէր ապագայ ժա-
մանակի վաճառականական փնտրոց պահանջի
ներքէ։

Համազգային խռովապահական ժողովքը Կա-
աւարկած էր ժանապարհին պատճառաւ զձեռա-

ան շրջափակել և ենթարկել մաքրանոցաց կա-
նոններուն: Այսին յուզումն ծագած կը համա-
բուսի Եմէնի ժողովոցը մէջ. նա մանաւանդ
որ 18 ամէն է վեր անհրեւ լցաւով, ասովը եւս
սիրած է: Սուլթանը այլ և այլ անգամ օգնու-
թիւն զրկեց և առանձին նպատակ ունեւորաց:
Բն Գուսը պաշտօնակէ ընելով Եմէնի քիւնու-
րական հրամանատարը զԱճմա Ֆէյզի փաշա,
սեղը անաւանց Հիւսէյնի՝ Հիւսի Եֆէնտի,
Նախկին փաշի Ասանայի, որուն պիտի ընկերեն
չորս բարձրատեման հոգեւորականքս ապը-
ստմութիւնը հանդարտեցնելու:

Համազգային առողջապահական նուիրակը
բուշդեցին մաքրանոցական օրինաց լպահուե-
լուն համար ք Մեքէն և ք Ճիտատէ:

Կ Բ Ե Տ Ե

Ռուսաստան, Գալլիա և Անգլիա կ'ուզեն հա-
մոցել զՍուլթանը որ Գեորգիոյ իշխանին թիկ-
նածութիւնը բնաւ չունէր այն անտեղութիւնքը,
յորոց կ'երկին թ. Գուսը: Ինչ և տանկահապա-
սակ կառավարչի մը հաստատութիւնը շատ
մը ազդեալի հետեւանքներ պիտի աւնենայ:

Արեւելի նաւատորմի զինքուն ծովակալը կը
պահանջին որ առ սակաւ սակաւ թուրք զուն-
դերը ամփոփուին և նոցա տեղ փոխանակեն
եւրոպացի զինակիրք: Աւստրիոյ և Գերմանիոյ
քաշաւէն վերջը մնացեալ Պետութեանց ծու-
լակալը զԱրեւմտ չորս մասն բաժնեցին, յորս
Իւրաքանչիւրը պիտի ջանայ նաւադութիւն և
կարգաւորութիւն հաստատել: Արեւմտեան
կողմը արուեստաւ իտալացեաց. Գալլիացեաց՝
Սիտիա և Հերապպարիոյ կանտիա Անգլիացեաց
և Ռուսաց Ռեդիմոյ կանեա և Սուսայի ծոցը
պիտի բռնեն համազգային պահանքդ: Զարը
շատ օգնութիւնը զրկեց բրիտանեցից:

Ապրիլ 30ի հետագիւր մը կը ծանուցանէ որ
Սուլթանը կ'ազէ հանել զՍարը նկատմամբ իշ-
խան Գեորգիոսի թիկնածութեան, պայման դնե-
լով որ ապահովուի իրեն՝ փոքր Ասիոյ ամբող-
ջութեամբ մնալն Թուրքիոյ:

Ի Տ Ա Լ Ի Ա

Մարտ 31ին իտալիոյ ծերակոյտը բաժնուելէն
տակը եւանդագիրն ուղերձ մը ըրաւ Ալապտոյ,
նի առողջութեան համար և զայն հետագրաւ
հաղորդեց իւր ընտանեացը:

Ի Պալերմոյ կրկին երեսփոխան ընտրուեցաւ
Արեւայի:

Պետութեան խորհուրդը նպատաւոր կար-

ծիք առաւա Վլադեքի մարտանաւին վաճառման
համար, որ մեծ յուզումն պատճառեց եւ թոսա-
րանին մէջ, Յովային զորութեան պաշտօնեայն՝
Իրինյ նոյն խորհրդոյն աւախարկեց նաեւ: Գարի-
բալդի մարտանաւին վաճառման դարինքը:

Ապրիլ 17ին աւարտեցաւ ք Ֆիրենցէ աշխար-
հադրական Համազգային ժողովը, ուր հաւա-
քուած էին 3006ն աւելի աշխարհաշէտք: Սահ-
մանուեցաւ Աշխարհադրական Դ ժողովը դու-
մարելու ք Միլան: Սկսան տօնախմբութիւնք
ք իշխատակ չորրորդ հարկւրամեկի Տոսկանել-
լի և Ամերիկոյ Վեպուլչչիի որ առաջին տեղե-
կագրեց Արմաբոսի քառս երկրները: Ամենայն
Պետութիւնք նստիւրակ զրկած են: Զարմանա-
լի՝ զուգարկութիւն Ամերիկայի պատերազ-
մին հետ:

Հաջին աղութեան պատճառաւ Ապրիլ 28ին
խուժութիւն մը ծագեցաւ ք Ռարի, որուն մաս-
նակցեցան 2000էն աւելի անձինք, կանայք և
աղայք: Սղա յարձկեցայն մաքրաստան և դրամ
ընդունուելու տեղերը, այրեցին թղթերը և ա-
ւերեցին հասարակաց պարտեզը: Փորձեցին
դիմելու նաեւ բանտերուն վրայ և ազատել
բանտարկեալները, սակայն վանեցան զինուոր-
ներէ: Յիսուսէն աւելի անձինք կ'ընտանու-
րուեցան: Նոյն օրինակ խուժութիւնք եղան ք
Յայէնցա և ք Ֆոճհա: Պետութիւնք թմէն
կողմ զինուոր և զինակիր կը զրկէ:

Մ Ո Ն Տ Ե Ն Ե Գ Բ Ո Տ

Ռուսիոյ Զարը նուէր զրկեց Նիկոլա իշխա-
նին 30,000 հրացանք և 30 միլիոն փամփուշտ:

1

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Յունական թոսարանի Ապրիլ 2ի գումարման
մէջ հաստատուեցաւ փոխառութեան ծրարիւրը
և նոյն օրը հրատարակուեցաւ օրենքը: Դեւ-
լիանիւն ծանոց որ թոսաբանը հոգացած ըլլա-
լով գրեալաւիտ ք թրքաց պարպելու միջոցքը,
յայնման անծամանութիւնք իւր ազատ գոր-
ծունէութիւնը ձեռք կ'առնուր: Սակայն Ապրիլ
հին Զայմի՝ պաշտօնարարներն նախագահը, թա-
ղաւորական հրովարտեալու գումարաւանքը
փակեց, այսպէս խափանելով պաշտօնարանա-
կան առաջնագը մը:

Թագափառանգը իւր Խոնուսին՝ Քոյը Գու-
լիելմոս Բի, և իշխանն Գեորգիոս թիկնածու
Արեւելի, Ապրիլ 21ին մեկնեցաւ ք Վենետիկ,
աւելից պիտի երթան ք Վոպենհազէն: Բեպին

և Լեւորդա: Գեորգիոս իշխանը Կոպենհագէն պիտի անցնի ի Պետերբուրգ: Ուղեւորութեան երկու ղլխաւոր նպատակ կ'ընծայուէի: Նախ հաշտեցնել զիշխանուհին իւր կայսր եղբոր հետ և ապա Լեւոյալ լուծել Կրետէի թեկնածութեան խնդիրը:

Ռ Ո Ւ Ս Ա Ս Ց Ա Ն

Ի Պետերբուրգ աւարտեցաւ առանց շառաշենքու կարեւոր դատ մը: Ամբաստանաւոր էին իւր մատնէնք Աւստրիա-Հունգարիոյ սահմանադիտաց զինուորական շարժմանց վերաբերեալ ծրագիրներու՝ Պետութեան խորհրդական գնդապետն Բարուշոֆ, առիտի ինքնապաշտ Շէֆքէթ Ապստերահման և ուրիշ եօթն պաշտօնեայք և զինուորքը Գասը եղաւ դռնփակ, և խիստ կերպով արգելաւած էր այս նիւթին վերաբերեալ որ և է տեղեւութիւն մը: Բարուշոֆ և իւր ղուսորը դատապարտուեցան աքսորի ի Սիբերիա: միւս զինուորականք հրացանով մահուան դատապարտուեցան: Երկուք միայն ապաւ ձգուեցան:

Ջորափարն Գուլիսթեյն, որ իւր զինուորական ընթացքը սկսած է ի Կովկաս և Լորին Միլիթֆիլ ղլխաւոր օգնականներէն մին եղած է Արաւահանի առման ժամանակ, անուանեցաւ զինուորական վարիչ Թուրքաստանի: Իսկ ղուսփարն Կրտսէքոֆ զինուորական վարիչ Ամուրի: Յետինս Սկաբլէֆի ղալըցնէն կը համարուէի, և ինքն եւս ընդ երկար ծառայած է ի Կովկաս:

Ս Ե Ր Բ Ի Ա

Ուսու վարչութիւնը պահանջեց 1878ի փոխառութենէն մնացեալ 8 միլիոն ֆրանքը: Ապրիլ 3ի Թագաւորական հրովարտակ մը հրաման կուտար Ազախիկին Կրտստաւունէն 10 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը ընել, և այսպէս Գոցել յարաժուտի պարտքերը:

Ապրիլ 6ին սերը-թուրք սահմանադիտայ վրայ արինձահել գործք եղան ընդ Ալանիացիս և զինակիրքաւ Ալանիացիք անցան սահմանադիւրը և երկու զինակիրք քալանաւեցան:

Միշտն Թագաւորակօր Կրտստութիւնը ի Սերբիա, պապաւած է սակայ վարչական տաղանդներու և Ալաւան Կերիւկովիչ ղաշտաւարանը որ Միլանու մշամբ կը գործէ: յայտնի թշնա, մուծիւն մը սկսած է ազատական կուսակցուութեանց զէմ, որոնք և կը կուսին լրագրաց մի-

ջրացա: Օժէք և Պոզիէր լրագրք Ապրիլ 18ին բաւոն յօդուածներ հրատարակեցին Միլանու զէմ, յորոց առաջինն բերան համարուած է Պաշիչ՝ Արմատականաց ղլխաւորին, և միւսն Կովաքովիչի: Թագաւորահայրը իւր ընդհանուր ապարապետ, այդ լրագրաց խմբագրապետը յանձնեց զինուորական իշխանութեան և աքսորուեցան հետաւոր բերդեր: Ապա Ապրիլ 22ին ամբաստանուեցաւ իւր յանցաւոր Պետութեան երեսփոխան Պաշիչ: Յետինս Միլանու Թագաւորութեան ժամանակ աքսորուած էր 1883էն ց1889: Ապա Թագապահութեան ժամանակ ներուսն տաացած էր և Աղեքսանդրի Թագաւորութեան ժամանակ նախագահ եղած էր պաշտօնարանի և խորհրդարանի նաեւ քաղաքադաւի Բելգրադի և զեպպան ի Պետերբուրգ: Իւր ամբաստանութիւն մեծ յուշում կը պատճառէ ազատական շրջանակներու մէջ:

Ս Պ Ա Ն Ի Ա

Գոն Կարլոս որ կը գտնուէր ի Վինետիկ, մեկնեցաւ ի Բրիւսէլ: Կանխաւ թղթով մը ծանուցեր էր իւր կուսակցաց ի Սպանիա, միւս նալու ընդդէմ հասարակաց թշնամայն: Ինքը ընաւ լէր ուղիւ տաղանայ մը յարուցանելու ներկայ ղլխաւորութեան, քանի որ պիտի ջանար Սպանիոյ պատերը պաշտպանել: «Բայց թէ յանկարծ անոնք՝ որոց ձեռքն է այսօր Սպանիոյ դրօշը, չգիտնան պահել զայն իւր պատուովը, այն ատեն ինքը իւրայնովք պիտի դիմէր հայրենեաց պատուոյն վրէժխնդրը ըլլալու ինչպէս յամին 1873 »:

Ապրիլ 39ի ծերակուտի նիստը Սպանիոյ պատմութեան նշանաւոր էջերէն մին պիտի մնայ, յորում Պահպանողական մասը Վէյլէր ղօրաւ վարին բերնով պաշտպանեց իւր քաղաքականութիւնը ի Կուրա, հակառակ ազատականաց, որոնք նախ ծնան ինքնավարութեան գաղափարը, որ փոխանակ բարեփոխման, յառաջ կը բերէր ներկայ վիճակը: Վէյլէր կը լինցէր իւրօքը ըսելով որ «Երջանիկ պիտի համարէր ինքզինքը, թէ կարենար կուսել ընդդէմ Միացեալ Նահանգաց: և խորհուրդ կուտար միշտ յարձակողական ծրագիր մը գործածել և ոչ պաշտպանողական », որ միշտ վնասաբեր եղած է Սպանիոյ:

Ի Սպանիա կը պատրաստուին քաղաքական պատերազմի մը տարերքներ:

Ք Ռ Լ Ի

Վերջերս Քիլիէի և Արճնէզնէայի մէջ սահմանադրող արշուղութեան խնդրքը, գծառութեան կերպարանք մը առին, մինչեւ համարուեցաւ որ հարկ պիտի ըլլար զինոց դիմել, Սակայն հաւանական է որ իրաւարար միջամտութեամբ մը լծայ: Քիլիէ կ'առաջարկէ խնդրոյ ներքեւ եղած երկիրները կէս բաժնել, այսպէս վերջնել պատերազմի մը առիթները:

Մ-Ն.

Ն Ո Ր Ա Լ Ո Ւ Ր

Մեր աշխատակիցներէն պր. Հրայեայ Ա. Գաւառի սոյ տարի անանդամ է Պարիզի պատմական եւ քանասիրական վարժարանը (*École des Hautes-Études. — Section historique et philologiques*):

Իւր ներկայացուցած Թէզն է Ռուսմանսիրութիւն Զանդկերէնի հոլովման վերջնական տառի մէջ, որ յաջորդ տարին պիտի հրատարակուի վարժարանին կողմանէ: Յիշեալ պարոնն՝ այժմ գնացած է Գերմանիոյ Մարասպուրգ քաղաքը, հետեւելու հայազէտ պրոֆ. Հիւբշմանի դասերուն եւ ռուսմանսիրելու համար նորա մեթոդը:

ՊԱՐՈՒՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՔԵՐԹԻՑ

ԱՂԻՅԻՐ (մարտ): Տփղիս:

Քրիստոս յարեալ է մեռելոց (ստանաւոր) — Ս. ԱՍԻԱՆ: — « Թշուառի թշուառն է միշտ յիշեալ » — Մ. ՄԻՍԻՍԵԱՆ: — Իմ Մանիկ օրօքը (ստանաւոր) — Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀ:

ՆԱԶԱՐԵԱՆՑ: — Առաջին ծաղիկներ թարգմ. ՕՐ.— Ն. Ա.: — Գարուն (ստանաւոր) — ՋՈՒ: — Լէօն-Կայսր, (շար.) — ՄԵՍԵԱՆ: — Հօր խոտունը (ստանաւոր) — Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀ: ՆԱԶԱՐԵԱՆՑ: — Սոսլիշ արքայազնը և նրա ուսուցիչը. — թարգմ. Գ. ԲԱՐՈՒՆԵԱՆ: — Կուռք (վերջ) — ԱՅՐԱՅ: — Կենսագրական — ՎԵՐՅԱՆԻՔ ԳԵՐՅԱՆ (վերջ) — Ն. ՅԵՐԱՆԵՍԻՍԵԱՆ: — Այլ և այլք՝ Յարութիւն առնող բոլորը: — Այլի բուսական: — Ջուար-ճաւիթ, Հանելուկներ: — Աղբ:

ԱՐԱՐԱՏ (փետրուար): Վարչաշապատ:

Քրիստոսի փորձութիւնն անապատում — Կ. Վ.: — Յիսուսի Նազարէթում անցրած խաղաղ տարիները: — Շէքերներէ պահպան — Գ. Վ.: — Եկեղեցական յրոնիկոն: — Մկրտիչ Նազալ (շար.) — Կ. Կ.: — Պրոֆ. Մարիէ կարծիքը Վրացաց ընդդէմ Հայոց ուղղած վէճի մասին — Ս. Մ.: — Բարբի կըրթութեան կազմակերպութիւնը հեռաւոր աւելուածում, Ամերիկայում — (թարգմ.): — Եկեղեցի Հայաստանայց: — Ինչ կարեք ունի Հայոց Եկեղեցին: — Մայր աթոռ. — Պարսկահայք. — Թարգմանաւոր վանքի արձանագրութիւնները (շար.) — Ի. Վ.: — Պաշտօնականք: — Յանկոնստան — Կոյ Սանդուխտ, նրա նոր Շարականները և նրանց հեղինակ. — Նորաարարութիւններ: — Բարձրագուծ թիւնք աղբ, հանդիսը:

ԱՐ. ՄԱՐՈՒՆ (1 ապրիլ): Ջմիւռնիս:

Սահման հարստութեան և թշուառութեան: — Ընտանեկան եղբրք մը (շար.) — Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ: — Տիպար քահանայ (շար. և վերջ) — Ն. ԱՅՐԱՐԵԱՆ: — Թատերական երկեր — Կ. Տ.: — Մագնիտականութիւն — Կ. Մ. ՅԱՆՈՒՆԵԱՆ: — Ընդունվայ աշխարհի լուին պայքարը — Գ. Ի.: — Տօնիցիթիթի ՅԱՆՈՒՆԻՍ ԵՐԵՆԻՅԱՆ: — Այնթապում գուշակ — ՏՐ. ՇԵՔԵՐՑ: — Նաւաւահանդէս — Բ. ՈՐԱՐԵԱՆ: — Յաւալի կորուստ մը և քահանայական հարցը յերեզա — Ն. ՀՐԱՆՑ: — Պատանշան — Կ. Ի. ԹԻՔԵԱՆ: — Իմ յուշակներ — Մ. Մ.: — Այլ և այլք: — (18 ապրիլ): Ինքնագրութիւն: — Ռուսային չափիղայն: — Հայ գաղթականութիւն Կիւրոսի — ՅԱՐ. ԱՍՏՈՐԵԱՆ: — Պետրոս Շանչանց — Բ. ՊԵՐՅԱՆԵԱՆ: — Տպագրութիւն մը — ԳԵՐՅԱՆ Կ. ՅԱՆՈՒՆԵԱՆ: — Կարծիք հակաթիւ — ԳԱՐԵԳՐԵԱՆ: — Վարդապետներ